3184

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«27» 03 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 028 - 24

Ձեռնարկողը՝ *Քաղաքացիներ Սոկրատ Պողոսյան և Վարդանուշ Ղուկասյան*
Ք. Երևան, Զեյթուն 10 փ., 33/1 տ

Գործունեությունը՝ *Աբովյան խոշորացված համայնքի Աբովյան բնակավայրի Բարեկամության հրապարակ 8 հասցեում նախատեսվող բնակելի համալիրի կառուցման նախնական գնահատման հայտ*
ՀՀ, Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 028 - 24

«27» մարտի 2024թ.

Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Աբովյան բնակավայրի Բարեկամության հրապարակ 8 հասցեում նախատեսվող բնակելի համալիրի կառուցման նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	Քաղաքացիներ Սոկրատ Պողոսյան և Վարդանուշ Ղուկասյան
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ՀՀ Կոտայքի մարզ,Աբովյան համայնք, Բարեկամության հրապարակ 8 հասցե

Ներածական մաս. Քաղաքացիներ Սոկրատ Պողոսյանը և Վարդանուշ Ղուկասյանը Աբովյան համայնքի Աբովյան բնակավայրի Բարեկամության հրապարակ 8 հասցեում նախատեսում են կառուցել բնակելի համալիր:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-150-Ն 03.05.2023) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա.» ենթակետի ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

Նախատեսվող գործունեության նախագծային աշխատանքների համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականը՝ №08112023-07-0174, /ծածկագիրը՝ 07-002-0121-0034/, Աբովյանի համայնքապետարանի կողմից 16.11.2023թ. տրված № 724 նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանք/: Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ ընդհանուր բաժնային սեփականություն:

Նկարագրական մաս. Համաձայն Աբովյան համայնքի ղեկավարի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի՝ նախատեսվում է կառուցապատողներին սեփականության իրավունքով պատկանող 6170 մ² մակերեսով հողամասում, որի մոտեցումները մի քանի կողմից ապահովված են ներհամայնքային նշանակության ճանապարհներով՝ կառուցել բնակելի համալիր: Նախագծված բազմաբնակարան բնակելի համալիր բաղկացած է լինելու նկուղային 2 հարկերից և 16 վերգետնյա հարկերից: Նկուղային հարկերը նախատեսված են ավտոկայանատեղիների համար, ինչպես նաև նախատեսվում է առանձնացնել տեխնիկական սենյակներ: Առաջին հարկում տեղակայված են լինելու հասարակական տարածքներ, որտեղից էլ կազմակերպված են լինելու նաև շենքերի գլխավոր մուտքերը, իսկ աստիճանավանդակի և երկու վերելակների միջոցով ապահովվում է կապը բոլոր՝ թե՛ ստորգետնյա, թե՛ վերգետնյա հարկերի միջև:

Երկրորդ հարկից մինչև տասնվեցերորդ հարկ նախատեսվող բնակարանների մոտեցումները կազմակերպված են լինելու ընդհանուր աստիճանավանդակով և վերելակներով:

- Հողամասի ընդհանուր մակերեսը - 6170.00 մ²
- Ստորգետնյա կառուցապատման մակերեսը - 4200 մ²,
- Վերգետնյա կառուցապատման մակերեսը - 2468 մ², 40 %
- Անջրանցիկ տարածքների մակերեսը - 1234 մ², 20 %
- Կանաչապատ տարածքի մակերեսը – 2468 մ², 40 %:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Ներկայումս տարածքում առկա են մոտավորապես 120 ծառ, հիմնականում ընկուզենի, հացենի և թխկի: Այս ծառերից 7 երիտասարդ ծառ կտեղափոխվի, 9 չորացած ծառ կհատվի, կհատվի նաև 23 ընկուզենի: Կանաչապատումը կիրականացվի տվյալ լանդշաֆտին բնորոշ ծառատեսակներով, կտնկվեն ավելի քան 100 նոր ծառատեսակներ և թփեր: Կառուցապատումից ազատ մակերեսում կիրականացվի սիզամարգի ցանքս, սիզամարգի սալարկ և ծաղկանոց ծաղկասածիլներով՝ հաշվի առնելով Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N 108-Ն որոշման պահանջները:

Հայտում ներկայացվող գործունեության նախապատրաստական և նախաշինարարական փուլում շինարարական աշխատանքները սկսելու համար նախատեսվում է կազմակերպել շինհրապարակ՝ ցանկապատով և այլ անհրաժեշտ ենթակառույցներով, կիրականացվի ժամանակավոր ցանկապատում մետաղական թիթեղներով (2,5մx1.2մ)՝ ապահովելով առողջության և աշխատանքի անվտանգության պայմանները, ինչպես նաև կիրականացվեն շինարարական հրապարակի կազմակերպման աշխատանքներ՝ շինհրապարակի լուսավորության ապահովման միջոցառումների, ժամանակավոր կառույցների տեղադրման, շինանյութերի ժամանակավոր պահեստավորման և թափոնների կուտակման ժամանակավոր վայրերի սահմանման, շինաշխատանքներում անհրաժեշտ հիմնական մեքենա-սարքավորումների կայանատեղիների սահմանման տեսքով:

Ապրանքային բետոնը շինհրապարակ է բերվում պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով՝ ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից, իսկ ամրանային իրերը պատրաստվում են հատուկ պոլիգոններում, մասամբ՝ շինհրապարակում: Հրապարակում սորուն նյութերը (ավազ, խիճ, հողային հանույթ և այլն) ժամանակավոր կպահվեն պաստառներով ծածկված վիճակում, շինարարական կոնստրուկցիաները (ամրաններ և այլն) հողային շերտից բարձր և ծածկերի տակ՝ բացառելու համար արտաքին միջավայրի ազդեցությունները՝ հաշվի առնելով վերջիններիս վարքի կոռոզիոն առանձնահատկությունները, իսկ մնացած շինարարական նյութերի պահապանումը հրապարակում կիրականացվի նորմատիվատեխնիկական պահանջներին համապատասխան: Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել՝ պահպանելով շինարարական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարական աշխատանքների ժամանակ հողի հանույթից կառաջանա բուսահող: Այն օրենսդրական պահանջներին համապատասխան հատուկ միջոցառումներով պետք է պահեստավորվի: Բնակելի համալիրի կառուցապատման աշխատանքների ավարտից հետո անհրաժեշտ կլինի բուսահողն օգտագործել կանաչապատման աշխատանքներն իրականացնելու համար: Բուսահողը հանդիպում է տարածքի 30 տոկոս մակերեսում և հզորությունը տատանվում է 10-25 սմ-ի տարածքում: Շինարարական աշխատանքների ժամանակ հողային աշխատանքներից կառաջանա մոտ 900 մ³ ծավալով բուսահող: Հողի բերրի շերտի կտրումը, տեղափոխումը, պահպանումը և օգտագործումը պետք է իրականացնել՝ առաջնորդվելով հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանման ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի

հուլիսի 20-ի N1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին Կառավարության 2017 թվականի նոյեմբերի 2-ի N 1404-Ն որոշմամբ հաստատված կարգով:

Այդ նպատակով հողամասի երկարությամբ նախատեսվում է կազմակերպել բերրի հողի պահեստ՝ ծածկի տակ և շրջանցող առուներով: Բերրի հողն ամբողջությամբ օգտագործվելու է տարածքի բարեկարգման և կանաչապատման նպատակով: Որպեսզի նվազագույնի հասցվի բերրի հողի հատկությունների կորուստը՝ պահպանման ընթացքում, յուրաքանչյուր տեղամասի աշխատանքների ավարտից այդ մասի բերրի հողը, առանց սպասելու ընդհանուր աշխատանքների ավարտին, անմիջապես կփռվի և կխնամվի:

Աբովյան քաղաքում բնակելի համալիրի կառուցման ժամանակ շրջակա միջավայրի վրա կդրսևորվեն որոշակի բացասական ազդեցություններ, սակայն վերջիններս կկրեն ժամանակավոր բնույթ: Ազդեցությունները իրենց բնույթով սահմանափակ են և կարճատև ու պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքներով: Շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված են արտանետումներով, որոնք կարող են առաջանալ հիմքերի փորման ընթացքում, դիզելային վառելիքի արտանետումներ՝ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ, հողային զանգվածների և շինաղբի տեղափոխման հետ կապված, շինարարական տեխնիկայի շահագործմամբ, բետոնային աշխատանքների իրականացմամբ, շինհրապարակների տեղադրման հետ կապված, շինարարական տեխնիկայի շահագործման ընթացքում աղմուկի մակարդակի ավելացմամբ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Դիզելային վառելիքի այրմամբ պայմանավորված արտանետումներ առաջանում են միայն շինարարության ընթացքում շինհրապարակի ներսում, տեխնիկական միջոցների աշխատանքի ընթացքում՝ շարժական աղբյուրներից: Այս արտանետումները կրում են ժամանակավոր բնույթ: Քանի որ շինարարական թափոններ և շինանյութեր տեղափոխող մեքենաների համար կսահմանվեն երթեր /մեքենաները դուրս կգան սահմանված ժամանակացույցով/, ապա շինհրապարակից դուրս օդի աղտոտվածության ավելացում չի լինի: Հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում, մասնավորապես՝ փոշու արտանետումները նվազեցնելու համար կիրականացվի շինհրապարակի պարբերաբար ջրցանում, փոշու տարածումը կանխելու նպատակով կօգտագործվի ցանցեր, շինանյութ տեղափոխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափքի ծածկման պայմաններում, ինչպես նաև կիրականացվի շին հրապարակ մուտք գործող և լքող մեքենաների անվադողերի լվացում:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները. շինարարական աշխատանքների համար օգտագործել տեխնիկական որակի ջուր՝ տարածքում առկա ոռոգման ջրացանցից, ջրցանի ծավալները հաշվարկել այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,տարածքի հոսքաջրերը միավորել մեկ բակային ցանցում և միացնել գոյություն ունեցող հեղեղատար ցանցին:

Շինարարական աշխատանքների ժամանակ մշտապես կիրականացվի շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար: Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ դրա

հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ: Շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ:

Նախատեսված է շրջակա միջավայրի վրա հնարավոր վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

Օդային ավազանն աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

-շինարարական աշխատանքների /փոշեառաջացման աշխատանքներ/ ընթացքում իրականացնել ջրցան,

-շինանյութերի ժամանակավոր կուտակումները և շինհրապարակը ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ կանխարգելելու համար փոշու տարածումը,

-պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում,

-գրունտի և սորուն նյութերի տեղափոխումն իրականացնել ծածկված թափքերով բեռնատարներով և երթևեկության համար սահմանել երթեր,

-խուսափել անորակ վառելիքի օգտագործումից:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

-շինարարական աշխատանքների համար օգտագործել տեխնիկական որակի ջուր՝ տարածքում առկա ոռոգման ջրացանցից՝ պայմանագրային հիմունքներով:

-Ջրցանի ծավալները հաշվարկել այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

-շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

-պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,

-շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին,

-խուսափել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից, անհրաժեշտության դեպքում խլացուցիչների տեղադրում,

-բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը

-աշխատանքները կատարել միայն օրվա ցերեկային ժամերին՝ 9:00-ից 18:00:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով անհրաժեշտ է՝

-հողի բերրի շերտը հանել և պահպանել ծածկված վիճակում՝ բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը,

-հողային աշխատանքների կատարման ընթացքում չօգտագործված հողի հանված բերրի շերտն անմիջապես դարսել լայնակույտերով, որոնց բարձրությունը և ձևը պետք է բացառի հողատարման գործընթացների զարգացումը,

-հողմատարումը կանխելու համար, լայնակույտերի մակերևույթն ու թեքությունները ամրացվում են խոտացանքով կամ այլ եղանակներով,

-քսայուղերի, հեղուկ վառելիքի հնարավոր մնացորդային քանակների առաջացման դեպքում վերջիններս պահել հատուկ անթափանց, փակ տարաներում՝ հետագայում որպես երկրորդային նյութ վերաօգտագործել շինարարական այլ աշխատանքներում, կամ հանձնել վերամշակող կազմակերպություններին,

-մեքենա-սարքավորումների լիցքավորումը, քսայուղերի փոխումը կամ նմանատիպ այլ գործողություններ իրականացնել մասնագիտացված կենտրոններում, որպեսզի հնարավորինս բացառվի շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և հնարավոր ռիսկերը,
-աշխատանքների ավարտից հետո տարածքը վերականգնել խախտված տարածքները և մաքրել՝ առաջացած թափոնները տեղափոխելով Աբովյանի համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայր:

Պատճառաբանական մաս. Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Աբովյանի համայնքապետարանի վարչական շենքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, Կոտայքի մարզպետի աշխատակազմից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել Հայտի լրամշակումներում:

Ամփոփելով Հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի ապահովմանը:
2. Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը, ինչպես նաև ծառահատումը՝ համաձայնեցնելով Աբովյանի համայնքապետարանի հետ:
3. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝
   -շինհրապարակի տարածքում անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,
   -շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
   -շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
   -բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
4. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Աբովյանի համայնքապետարանի հետ համաձայնեցված:

5. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել գազամատակարարման, էլեկտրամատակարման և ջրամատակարարման համար ստացված տեխնիկական պայմանների համաձայն:
6. Նախագծի վերջնական տարբերակում հաշվի առնել Կառավարության 2018թ. ապրիլի 12-ի N426-Ն՝ «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» որոշման պահանջները:
7. Հասարակական շենքի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Քաղաքացիներ Սոկրատ Պողոսյանի և Վարդանուշ Ղուկասյանի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Աբովյան համայնքի, Աբովյան բնակավայրի Բարեկամության հրապարակ 8 հասցեում նախատեսվող բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Աննա Մարգսյան